ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Միջնադարյան հայ պատմագրության առաջացման ու զարգացման ընդհանուր պատկերը պատկերացնելու տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի սկզբունքային մի շարք հարցերի պարզաբանումը:

Նախ՝ անհրաժեշտություն է զգացվում հստակորեն սահմանել միջնադարյան հայ պատմագրության ժամանակագրական սահմանագծերը և բնութագրական գծերը:

Լուսաբանման կարիք ունեցող հարցերի հաջորդ խումբը կապված է միջնադարյան հայ պատմագրության պարբերացման սկզբունքների հետ: Պարբերացման փորձեր կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել բազմակողմանի կապերի մեջ գտնվող մի շարք գործոններ: Դրանցից են միջնադարյան հայ պատմագրության տարբեր փուլերում պատմական երկրների ժանրային պատկանելությունը, ժամանակագրական ու տարածքային ընդգրկումը, լեզուն և ոճը, բանավոր ու գրավոր մշակույթների հարաբերակցությունը, գաղափարական ուղղվածությունը, բովանդակությունը և այլն:

Ըստ այդմ՝ միջնադարյան հայ պատմագրությունը կարելի է բաժանել չորս փուլի.

V-VIII դարեր՝ կազմավորման և վերելքի,

X-XIII դարեր՝ զարթոնքի,

XIV-XVI դարեր՝ անկման,

XVII-XVIII դարեր՝ նոր վերելքի: